«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

Ք.Երևան **25.08.2021թ.**

2021թ. օգոստոսի 25-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի 2021-2022 ուստարվա անդրանիկ նիստը՝ Ի.Վարդանյանի նախագահությամբ: Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները, քարտուղար՝ Լ.Հարությունյանը, ամբիոնի վարիչները և հիմնական դասախոսական կազմը, ուսանողական խորհրդից՝ Ա.Գալստյանը և հրավիրված ուսանող՝ Մ.Վերանյանը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. Մանկավարժական խորհրդի կազմի վերանայման և հաստատման մասին:

(Զեկուցող, Մանկավարժական խորհրդի քարտուղար՝ Լ.Հարությունյան):

2. 2021-2022 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների և վերանայված ՄԿԾ-ի քննարկման մասին:

(Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

3. 2021-2022 ուստարվա ուսումնական պլանների քննարկում:

(Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

4. Քոլեջում ուսանողների կողմից հետազոտական աշխատանքների համակարգման մասին:

(Զեկուցող, ՈԱ պատասխանատու՝ Լ.Հարությունյան):

5. Ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքների ընթացքի մասին:

(Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

1. **Լսեցին.** Մանկավարժական խորհրդի քարտուղար Լ.Հարությունյանի ելույթը Մանկավարժական խորհրդի կազմի վերանայման և հաստատման վերաբերյալ:

Ողջունելով Խորհրդի անդամներին, Լ.Հարությունյանը տեղեկացրեց, որ քոլեջի դասախոսական կազմում առանձնապես փոփոխություններ չեն եղել, հիմնականում այն մնացել է նույնը, այդ իսկ պատճառով Մանկավարժական խորհրդի կազմի վերանայման անհրաժեշտություն չի առաջացել, բացառությամբ ուսանողական խորհրդի նախագահի առաջարկությունը՝ մանկավարժական խորհրդում ընդգրկել ևս մեկ ուսանող:

Շարունակելով ելույթը, նա ներկայարեց ուսանող Մերի Վերանյանին, առաջարկելով քննարկել և հաստատել Մանկավարժական խորհրդի կազմը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրեն՝ Ի.Վարդանյանը իր ելույթում նշեց, որ նման մոտեցումը էլ ավելի լսելի և ընդունելի կդարձնի ուսանողների ձայնը խորհրդակցական մարմիններում: Եզրափակելով ելույթը Ի.Վարդանյանը առաջարկեց քվարկել և հաստատել նոր կազմը:

Ուսանող՝ Ա.Գալստյանը իր ելույթում նշեց, որ արտաքին փորձագետ Ա.Գ.Գյոզալյանի աջակցությամբ իրականացվում են բարեփոխումների ծավալուն աշխատանքներ, մասնավորապես կապված Քոլեջում ՈԱ գործընթացներում ուսանողների ներգրավվածության մեծացման ուղղությամբ: Հենց փորձագետ Ա.Գյոզալյանի առաջարկությամբ Քոլեջի ուսանողական խորհրդին կից ձևավորվեց երկու հանձնաժողովները՝ կառավարչական և ուսումնական: Մ.Վերանյանը որպես ուսանող ունի բարձր առաջադիմություն, ընկերասեր, բանիմաց անձնավորություն է: Ամփոփելով ելույթը, նախապես շնորհակալություն հայտնեց մանկավարժական խորհրդին ընդառաջելու ուսանողական խորհրդին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել Մանկավարժական խորհրդի նոր կազմը (կազմը կցվում է):
2. Հանձնարարել ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանին պատրաստել համապատասխան հրամանը և ներկայացնել տնօրենին:
3. Հանձնարարել Մանկավարժական խորհրդի քարտուղար Լ.Հարությունյանին նիստի արձանագրության քաղվածքը հասանելի դարձնել ներքին շահակիցներին:

2. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը 2021-2022 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

Լ.Հարությունյանը համառոտ և բովանդակային ներկայացրերց 2021-2022 ուստարվա ուսումնական գործընթացին ընդառաջ ամբիոնների հետ համատեղ իրականացված նախապատրաստական աշխատանքները.

- Տնօրենի հրամանով ձևավորված աշխատանքային խումբը ըստ ՊԿՉ-ների ամբողջովին մշակել է նոր ձևաչափով գործող ՄԿԾ-ի փաթեթներ:
- Վերանայվել և պատրաստվել են 4 մասնագիտությունների՝ միջնակարգ և հիմնական

ընդհնուր հիմքերով գործող մասնագիտությունների ուսումնական պլանների նախագծերը:

- Հաշվարկվել են ուսումնական պլաններով նախատեսված դասաժամերը, որոնք տրմադրվել են ամբիոններին:
- Հաստատված ժամաբաշխման հիման վրա պատրաստվել է դասախոսների տարիֆիկացիայի նախագիծը:
- Կազմվել են համապատասխան ուսումնական խմբեր՝ հանրակրթական և մասնագիտական:
- Պտրաստվել է ըստ մոդուլային ուսուցման դասացուցակները:
- Բոլոր ուսումնական խմբերի համար նշանակվել են դասղեկներ:
- Վերանայվել են ամբիոնների կազմերը:
- Ուսումնական մասնաշենքն ու բոլոր ստորաբաժանումները մաքրությամբ, անհրաժեշտ կահավորմամբ պատրաստ են նոր ուսումնական տարվա մեկնարկին:

Ամփոփելով ելույթը, Լ.Հարությունյանը անդրադաձավ նաև նոր ձևաչափով մշակվող առարկայական դասընթացների ծրագրերին և խնդրեց ամբիոնի վարիչներին արագացնել վերանայման աշխատանքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ամբիոնի վարիչներ՝ Ս.Կեսոյանը, Լ.Բաբայանը և Ա.Գրիգորյանը իրենց ելույթում նշեցին, որ իրոք կատարված նախապատրաստական աշխատանքները գոհացուցիչ են, իսկ առարկայական ծրագրերը մեկ շաբաթվա ընթացքում կներկայացվեն ուսումնական մաս:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Նախապատրաստական աշխատանքները ընդունել ի գիտություն և համարել բավարար:
2. Երաշխավորել նոր ՄԿԾ-ի փաթեթները ներկայացնել տնօրինական խորհուրդ հաստատման:
3. Հանձարարել Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին տնօրինական խորհրդին ներկայացնել երաշխավորված փաթեթները:

3. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարչ Լ.Հարությունյանի ելույթը 2021-2022 ուստարվա ըստ մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնկան պլանների նախագծերի ներկայացման վերաբերյալ:

Լ.Հարությունյանը ներակայցրեց ուսումնական պլանների նախագծերը, նշելով, որ ուսումնական պլանները վերանայվել և լրամշակվել են 2021-2022 ուստարվա

նախապատրաստական աշխատաքների ընթացքում, որին ակտիվ մասնակցել են նաև ամբիոնի վարիչները: Եզրափակելով ելույթը, նա առաջարկեց նախագծերը քննարկել և երաշխավորվել Տնօրինական խորհուրդ ներկայացնելու համար (ուսումնական պլանների նախագծերը կցվում են):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Երաշխավորել 2021-2022 ուստարվա ըստ մասնագիտությունների ուսումնական պլանների նախագծերը ներկայացնելու Տնօրինական խորհուրդ:
2. Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին հանձարարել հաստատվելուց հետո ուսումնական պլանները տրամադրել մասնագիտական ամբիոններին:

4. Լսեցին՝ ՈԱ պատասխանատու Լ.Հարությունյանի ելույթը Քոլեջում ուսանողների կողմից հետազոտական աշխատանքների համակարգման վերաբերյալ:

Լ.Հարությունյանը իր ելույթում ներկայացրեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի գործող ռազմավարական զարգացման ծրագրի 6-րդ նպատակը (Նպաստել Քոլեջում հետազոտական գործունեության արդյունավետության բարձրացմանը): Համաձայն գործող ՌԶԾ-ի, որով կարգավորվում է Քոլեջում հետազոտական գործունեության ողջ գործընթացը, անհրաժեշտություն է առաջացել իրականացվող հետազոտական աշխատանքների համակարգման համար մշակել և ներդնել համապատասխան քաղաքականություն:

Հաշվի առնելով այս հանգամանքը, Լ.Հարությունյանը առաջարկեց Քոլեջում հետազոտության ոլորտում հետաքրքրությունները և հավակնությունները որոշելիս առաջնորդվել հանրության, սոցիալական, տնտեսական, առողջապահական ոլորտներում առկա հիմնահարցերի լուծումներով: Շարունակելով ելույթը, Լ.Հարությունյանը առաջարկեց քննարկել և տնօրինական խորհուրդ ներկայացնել 2 երկարաժամկետ հետազոտական ուղղություններ.

1. Սոցիալ տնտեսական և բժշկակենսաբանական հիմնահարցեր:
2. Ավանդական և ժամանակակից դեղաբանության հիմնահարցեր:

Քոլեջի ուսումնական ստորաբաժանումների (ամբիոնների) դասախոսական կազմի յուրաքանչյուր անդամ հիմք ընդունելով այս ուղղությունները, կարող է ընտրել և իրականացնել համապատասխան հետազոտական թեմա՝ ելնելով Քոլեջի առկա

խնդիրներից, իր մասնագիտական առանձնահատկություններից, կողմնորոշումից, հետաքրքրություններից և հավակնություններից:

Ամփոփելով ելույթը Լ.Հարությունյանը քննարկմանը ներկայացրեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու քաղաքականության և «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Միջին մասնագիտական կրթական ծրագրի դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգի նախագծերը, որոնք անհրաժեշտ են և կնպաստեն դասախոսներին և ուսանողներին հստակեցնել Քոլեջում իրականացվող հետազոտական բնույթի աշխատանքները (փաստաթղթերի նախագծերը կցվում են):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Թերապիայի, քույրական գործ և նեղ մասնագիտական առարկաների ամբիոնի վարիչ՝ Անյուտա Գրիգորյանը իր ելույթում նշեց, որ իրոք միչ օրս ուսանողները կատարում են տարբեր հետազոտական աշխատանքներ, սակայն դրանք չեն ունեցել կոնկրետ պահանջներ և չափանիշներ և առաջարկեց, եթե հնարավոր է ավելացնել նաև ևս մեկ ուղղություն, օրինակ՝ «Մանկաբարձական և քույրական գործունեության ժամանակակից հիմնահարցեր»:

Ուսանողներ՝ Ա.Գալստյանը և Մ.Վերանյանը իրենց ելույթում նշեցին, որ իրոք այսքան ժամանակ ուսանողների կողմից կատարված տարբեր աշխատանքները (կուրսային, ավարտական և ռեֆերատիվ) վերջում ուղղակի գնահատվել են: Սակայն, ծանոթանալով այս փաստաթղթերի բովանդակությանը, այն շատ օգտակար կլինի մեր ուսանողների կողմից հետագայում պլանավորվող հետազոտական աշխատանքները կազմակերպելիս: Վերջում խնդրեցին ուսանողական խորհրդին տալ ժամանակ, մանրամասն ուսումնասիրելու և անհրաժեշտության դեպքում առաջարկություններ տրամադրելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ներկայացված փաստաթղթերի նախագծերը երկամսյա ժամկետում քննարկել և ներկայացրել տնօրինական խորհուրդ:
2. Հանձնարարել ուսանողական խորհրդին կազմակերպել քննարկումներ ուսանողների շրջանում և ներկայացնել առաջարկություններ:
3. Երաշխավորել տնօրինական խորհրդի հաստատմանը Քոլեջի երկարաժամկետ հետազոտական երեք ուղղությունները (1. «Սոցիալ տնտեսական և բժշկակենսա-բանական հիմնահարցեր», 2. «Ավանդական և ժամանակակից դեղաբանության հիմնահարցեր», 3. «Մանկաբարձական և քույրական գործունեության ժամանակակից

հիմնահարցեր»):

5. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարչ Լ.Հարությունյանի ելույթը Ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Լ.Հարությունյանը իր ելույթում ներկայացրեց Քոլեջի տնօրենի հրամանով ձևավորված աշխատանքային խմբի կողմից իրականացված աշխատանքները: Տնօրենի 15.02.2021թ. № ԿԳ 04 - Ա հրամանով ձևավորված աշխատանքային խումբը այս պահի դրությամբ ամբողջովին ավարտել է 5 չափանիշների ինքնավերլուծության աշխատանքները և պատրաստել է փաթեթի նախագիծը: Ըստ պլան-ժամանակացույցի, մինչև 2022 թվականի փետրվար ամիսը կներկայացվի ամբողջական փաթեթի նախագիծը: Հիմնական խնդիրները, որն առաջացել են, կապված է շրջանավարտների կողմից տրամադրվող տեղեկատվությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաղորդումն ընդունել ի գիտություն:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

Ք.Երևան **09.11.2021թ.**

2021թ. նոյեմբերի 9-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի 2021-2022 ուստարվա հերթական ընդլայնված նիստը՝ Ի.Վարդանյանի նախագահությամբ: Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները, քարտուղար՝ Լ.Հարությունյանը, ամբիոնի վարիչները, հիմնական դասախոսական կազմը, ուսանողական խորհրդից՝ Ա.Գալստյանը, Մ.Վերանյանը, հրավիրված ՈԱ արտաքին փորձագետ՝ Ա.Գ.Գյոզալյանը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. Ուսումնական մասի 2020-2021 ուստարվա աշխատանքների կատարողականի ներկայացում:

(Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

2. Ամբիոնների գործունեության տարեկան կատարողականի ներկայացում:

(Զեկուցող, Ամբիոնի վարիչներ):

3. Քոլեջում կրթության որակի ներքին ապահովման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հաղորդում:

(Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ, ՈԱ պատասխանաու՝ Լ.Հարությունյան):

4. Քոլեջում ուսանողների կողմից հետազոտական աշխատանքների համակարգման մասին:

(Զեկուցող, ՈԱ պատասխանատու՝ Լ.Հարությունյան):

1. **Լսեցին.** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը՝ ուսումնական մասի 2020-2021 ուստարվա կատարված աշխատանքների վերաբերյալ:

Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանը իր ելույթում նշեց, որ 2020-2021 ուստարվա ամբողջ գործընթացը կազմակերպվել է համաձայն գործող ուսումնական մասի պլանի, պլանով նախատեսված բոլոր աշխատանքները և միջոցառումները կատարվել են ամբողջովին: Ելույթում ներկայացրեց այն աշխատանքները, որոնք իրականացվել են՝

- Դասախոսական կազմի հետ պարբերաբար կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ, տրամադրվել անհրաժեշտ խորհրդատվություն և աջակցություն:
- Հաշվետու ուստարում բոլոր ամբիոնների մանկավաժները ուսանողների հետ կազմակերպել են հանիպումներ, քննարկումներ, տարվել համապատասխան բացատրական և խորհրդատվական աշխատանքներ:
- Ուսումնամեթոդական ռեսուրսերի բարելավման աշխատաքները իրականացվել են ըստ ամբիոնների կողմից ներկայացված պահանջների:

Ամփոփելով ելույթը, նա նշեց, որ 2020-2021 ուստարվա կատարված աշխատանքների կատարողականը տրվել է տնօրենին և խորհրդի բոլոր անդամներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսանող՝ Ա.Գալստյանը իր ելութում նախ շնորհակալություն հայտնեց Քոլեջի ղեկավարությանը ուսանողներին ընձեռած վստահության համար, նշեց, որ հաշվետու ուստարվա ընթացքում ուսանողական խորհուրդը ուսումնական մասի և ամբիոնների հետ համատեղ իրականացրել է ուսումնադաստիրակչական մի շարք միջոցառումներ, որոնք ներկայացվել են Ուսանողական խորհրդի 2020-2021 ուստարվա կատարողականում:

Ինչ վերաբերվում է ուսումնական մասի շխատանքների, ապա ամբողջ ուսանողության անունից կարող եմ ասել, որ ոչ մի խնդիր չի արձանագրվել և Ուսումնական մասի կողմից կատարված աշխատանքները գնահատվել են բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն և կատարված աշխատանքները գնահատել բավարար (հաշվետվությունը կցվում է):
2. Հանձնարարել Լ.Հարությունյանին ընթացիկ ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել ուսանողների շրջանում հարցումներ:

2. **Լսեցին՝** Ամբիոնների վարիչների ելույթը ամբիոնների գործունեության տարեկան կատարողականի վերաբերյալ:

Ամբիոնի վարիչներ՝ Անի Մարգարյանը, Լիլիթ Բաբայանը, Սեդա Կեսոյանը, Արեգնազ Մելքոնյանը և Անյուտա Գրիգորյանը ամփոփ տեսքով ներկայացրեցին համաձայն իրենց գործող պլանի ամբիոններում իրականացված աշխատանքների վերաբերյալ տարեկան կատարողականները: Ամբիոնի վարիչների կողմից ներկայացված կատարողականները նախապես ներկայացվել են ուսումնական մաս և տնօրենին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ամբիոնների կատարողականները գնահատել բավարար:
2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին հաջորդ ուստարվա ավարտին ներկայացնել համամետական վերլուծություն նախորդ 2 տարիների ժամանակահատվածի համար:
3. Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյանին հանձարարել մշակել և ներկայացնել ամբիոնների գործունեության բարելավման միջոցառումների պլան:

3. **Լսեցին՝** ՈԱ պատասխանաու Լ.Հարությունյանի ելույթը Քոլեջում կրթության որակի ներքին ապահովման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հաղորդումը:

Լ.Հարությունյանը նախ ներկայացրեց Քոլեջում իրականացվող ինստիտուցիոնալ հավատարմագրման նախապատրաստական աշխատանքները, մասնավորապես՝ վերանայվել են Քոլեջում գործող բոլոր ներքին նորմատիվ փաստաթղթերը, մշակվել են խիստ անհրաժեշտ նոր փաստաթղթեր: ՈԱ արտաքին փորձագետ Ա.Գ.Գյոզալյանի մասնակցությամբ կազմակերպվել են քննարկումներ, խորհրդատվություններ, ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների շրջանում: Վերջնական տեսքի է բերվել որոշ ներքին նորմատիվ փաստաթղթեր, որոնք կներկայացվեն ներքին շահակիցների քննարկմանը:

Ամփոփելով ելույթը, Լ.Հարությունյանը խոսքը փոխանցեց ՈԱ արտաքին փորձագետ՝ Ա.Գ.Գյոզալյանին:

ԱԲՀ-ի ՈԱ և ԿԲ աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Գյոզալյանը նախ ողջունեց մանկավարժական խորհրդի անդամներին, որից հետո ներկայացրեց ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի առանձնահատկությունները: Նա հանգամանորեն ներկայացրեց ըստ փուլերի և գործողությունների ինքնավերլուծության ձևաչափը և ինչպես

պետք այն լրացնել: Ամփոփելով ելույթը, Ա.Գ.Գյոզալյանը հավելց նաև, որ ինքը պատրաստ է տրամադրել մասնագիտական աջակցություն լրացնելու ինքնավերլուծության ձևաչափը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել Լ.Հարությունյանին հարցը ներկայացնել տնօրինական խորհուրդ:

4. **Լսեցին**՝ ՈԱ պատասխանատու Լ.Հարությունյանի ելույթը Քոլեջում ուսանողների կողմից հետազոտական աշխատանքների համակարգման վերաբերյալ:

Լ.Հարությունյանը իր ելույթում ներկայացրեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի գործող ռազմավարական զարգացման ծրագրի 6-րդ նպատակը (Նպաստել Քոլեջում հետազոտական գործունեության արդյունավետության բարձրացմանը): Լ.Հարությունյանը ներկայացրեց երկու («Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու քաղաքականություն և «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Միջին մասնագիտական կրթական ծրագրի դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման Կարգ) փաստաթղթի վերջնական տարբերակների նախագծերը, որոնք դասախոսական անձնակազմի և ուսանողական խորհրդի կողմից հավանություն են ստացել: Աշխատանքների ժամանակ բանավոր առաջարկությունները ներառվել են փաստաթղթերի վերջնական լրամշակված տարբերակում:

Ամփոփելով ելույթը Լ.Հարությունյանը առաջարկեց երաշխավորել և ներկայացնել տնօրինական խորհուրդ հաստատման:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ներկայացված փաստաթղթերի նախագծերը երաշխավորել և ներկայացրել տնօրինական խորհուրդ հաստատման:
2. Հանձնարարել ուսանողական խորհրդին կազմակերպել հանդիպումներ 2-րդ և 3-րդ կուրսերի ուսանողների հետ, ներկայացնելով փաստաթղթերը:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

Ք.Երևան **21.01.2022թ.**

2022թ. հունվարի 21-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի հերթական նիստը Ի.Վարդանյանի նախագահությամբ: Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները, քարտուղար՝ Լ.Հարությունյանը, ամբիոնի վարիչները և հիմնական դասախոսական կազմը, ուսանողական խորհրդից՝ Ա.Գալստյանը, Մ.Վերանյանը, ինչպես նաև հրավիրված զեկուցողներ հաշվապահ Ս.Հովակիմյանը, ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանը և ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. 2021-2022 ուստարվա աշնանային կիսամյակի ուսումնական գործընթացի կատարողականի և երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:
(Զեկուցող՝ Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

2. Քոլեջում ուսումնադաստիարակչական աշխատանքների և կրթության որակի ներքին ապահովման ընթացքի վերաբերյալ:
(Զեկուցող, Մասնագիտական ամբիոնի վարիչներ):

3. Քոլեջի 2021-2022 ուստարվա աշնանային կիսամյակի ուսման վարձերի հավաքագրման մասին:
(Զեկուցող՝ Հաշվապահ՝ Ս.Հովակիմյան):

4. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ի ընթացքի մասին:
(Զեկուցող՝ ՈԱ պատասխանաու՝ Ա.Գ.Գյոզալյան):

1. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի կատարողականի և 2-րդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Լ.Հարությունյանը ողջունելով բոլոր մասնակիցներին, տեղեկացրեց, որ 2021-2022 ուստարվա աշնանային կիսամյակով ըստ ուսումնական պլանի նախատեսված միջանկյալ և ամփոփիչ ստուգումները կազմակերպվել են ըստ նախապես հաստատված ժամանակացույցի: Նա նշեց, որ 2021-2022 ուստարվա աշնանային կիսամյակի միջանկյալ և ամփոփիչ ստուգումների վերաբերյալ ընդհանուր ամփոփ տվյալները կներկայացնի ուսումնական տարվա խորհրդի ամփոփիչ նիստում: Ինչ վերաբերում է 2021-2022 ուստարվա գարնանային կիսամյակի նախապատրաստական աշխատանքներին, ապա բոլոր անհրաժեշտ աշխատանքները գրեթե ավարտված են, մնացել է միայն դասացուցակի և ժամանակացույցի վերջնական տարբերակների քննարկումը: Ամբիոներին հանձնարարվել է ըստ իրենց պլան-ժամանակացույցի կազմակերպել ամբիոնի նիստերը, որից հետո հաստատման կնրկայացնեն իրենց թեմատիկ պլանները, ուսումնական մասը կտրամադրի 2-րդ կիսամյակի դասամատյանները:

Ամփոփելով ելույթը, նա նշեց, որ առաջին կիսամյակում բոլոր քննությունները անցկացվել են ըստ վարման կարգի, ուսանողների կողմից գիտելիքների գնահատման արդյունքների վերաբերյալ բողոքարկումներ և տարաձայնություններ չեն արձնագրվել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն և կատարված աշխատանքները գնահատել բավարար:
2. Հանձնարարել ամբիոնի վարիչներին կազմակերպել ամբիոնի նիստեր և քննարկել ընթացիկ հարցերը:
3. Հանձնարարել ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին, կազմակերպել վերահսկողություն և արդյունքների մասին պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել քոլեջի տնօրենին:

2. **Լսեցին՝** Մասնագիտական ամբիոնի վարիչների ելույթը Քոլեջում ուսումնադաստիարակչական աշխատանքների և կրթության որակի ներքին ապահովման ընթացքի վերաբերյալ:

«Դեղագիտական առարկաների» ամբիոնի վարիչ՝ Սեդա Կեսոյանը, «Թերապիայի, քույրական գործ և նեղ մասնագիտական առարկաների» ամբիոնի վարիչ՝ Անյուտա Գրիգորյանը և «Ատամնատեխնիկական և ստոմոտոլոգիական առարկաների» ամբիոնի վարիչ՝ Արեգնազ Մելքոնյանը իրենց ելույթներում ներկայացրեցին մասնագիտական ամբիոնների կողմից իրականացված աշխատանքները:

Մասնագիտական ամբիոնների կողմից մեծ աշխատանքներ են տարվել, հատկապես ուսանողների մասնագիտական կողմնորոշման հետ կապված, ակտիվացել է ուսանողական խորհրդի աշխատանքները: Քոլեջում ուսումնադաստիարակչական աշխատանքները իրականացվում են միասնական ուժերով՝ ուսանողական խորհուրդ,

ամբիոններ և տնօրինություն: Հիմնականում քոլեջում տիրում է բարիդրացիական մթնոլորտ, ոչ մի լուրջ խնդիրներ, կապված ուսանողների վարքագծի հետ կապված չեն արձանագրվել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

- Դասախոսներ՝ Ա.Գրիգորյանը և Լ.Բաբայանը իրենց ելույթներում նշեցին, որ անհրաժեշտ է ակտիվացնել հետազոտական աշխատանքները ուսանողների հետ և այդ հարցում ակտիվ ներգրավել ուսանողական խորհրդին:
- Ուսանողական խորհրդի անդամ Մ.Վերանյանը ուսանողական խորհրդի անունից վստահեցրեց, որ մինչև տարեվերջ ուսանողական խորհրդի կողմից կներկայացվեն առնվազն 2 աշխատանքներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել մասնագիտական ամիբիոնի վարիչների կազմակերպել հանդիպումներ ուսանողների հետ և տեղեկացնել հետազոտական աշխատանքներին առնչվող փաստաթղթերը:

3. **Լսեցին՝** Հաշվապահ Ս.Հովակիմյանի ելույթը Քոլեջի 2021-2022 ուստարվա աշնանային կիսամյակի ուսման վարձերի հավաքագրման վերաբերյալ:

Ս.Հովակիմյանը իր ելույթում տեղեկացրեց, որ անհրաժեշտ է լուրջ միջոցներ ձեռնարկել ուսման վարձերի հավաքագրման գործում, քանի որ այդ հարցը շատ կարևոր է քոլեջի հետագա արդյունավետ գործունեության համար: Այդ իսկ պատճառով առաջարկեց մասնագիտական ամբիոնների վարիչներին կազմակերպել հանդիպումներ ուսանողների հետ և ուսանողական խորհրդի անմիջական օգնությամբ լուծում տալ այդ հարցին:

Ամփոփելով ելույթը, Ս.Հովակիմյանը ներկայացրեց աշնանային կիսամյակում այն ուսանողների ցուցակը, ովքեր ունեն ուսման վարձի պարտքեր և խնդրեց մասնագիտական ամբիոններին տանել համապատասխան աշխատանքներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ն.Եգորյանը իր ելույթում նշեց, որ այդ հարցը գտնվում է անձամբ իր վերահսկողության ներքո և ամբիոնի վարիչների հետ պարբերաբար քննարկվում են:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին կազմակերպել հանդիպումներ և ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ:

4. **Լսեցին՝** ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024 թվակնների ռազմավարական զարգացման ծրագրի ընթացքի վերաբերյալ:

Ա.Գ.Գյոզալյանը ներկայացրեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. ռազմավարական զարգացման ծրագրի ընթացքը, որը, համաձայն պլան-ժամանակացույցի իրականացվում է առանց որևէ խոչընդոտների և խնդիրների: Որպես փաստարկ, Ա.Գ.Գյոզալյանը ներկայացրեց «Քույրական գործ» մասնագիտության անգլերեն լեզվով ուսումնական պլանը և մի քանի առարկայական ծրագրեր, շարունակելով ելույթը, նա նշեց, որ շատ հավանական արդեն իսկ 2022-2023 ուստարվանից հնարավոր է իրականացնել օտար ազգի դիմորդների ընդունելություն:

Ամփոփելով ելույթը, Ա.Գ.Գյոզալյանը նշեց, որ նախատեսվում է ընթացիկ ուստարվա վերջում ներկայացնել տարեկան կատարողական զեկույց, համաձայն պլան-ժամանակացույցի:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ա.Գյոզալյանի կողմից տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել Մանկավարժական խորհրդի անդամներին ակտիվ մասնակցել գործող ՌԶԾ-ի գործողությունների իրականացմանը:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

Ք.Երևան **27.06.2022թ.**

2022թ. հունինսի 27-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի 2021-2022 ուստարվա ամփոփիչ նիստը՝ Ի.Վարդանյանի նախագահությամբ: Նիստին ներկա էին խորհրդի քարտուղար՝ Լ.Հարությունյանը, անդամներ՝ ամբիոնի վարիչները, հիմնական դասախոսական կազմը, ուսանողական խորհրդից Ա.Գալստյանը, Մ.Վերանյանը ինչպես նաև հրավիրված ՈԱ պատասխանատու՝ Ա.Գ.Գյոզալյանը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի Մանկավարժական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. 2021-2022 ուստարվա ամառային քննաշրջանի ամփոփման մասին:

(Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

2. 2021-2022 ուստարվա պետական ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին:

(Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

3. Քոլեջում գործող ներքին նորմատիվ փաստաթղթերի ընթացքի մասին:

(Զեկուցող, ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյան):

4. Ինստիտուցիոնալ հավատարմագրման աշխատանքների մասին:

(Զեկուցող, ՈԱ պատասխանատու՝ Ա.Գ.Գյոզալյան):

1. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը 2021-2022 ուստարվա ամառային քննաշրջանի ամփոփման վերաբերյալ:

Ողջունելով նիստի բոլոր մասնակիցներին, Լ.Հարությունյանը ներկայացրեց միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով «Ատամնատեխնիկական գործ», «Դեղագործություն», «Մանկաբարձական գործ» և «Քույրական գործ» մասնագիտություն-ներով բոլոր կուրսերում 2021-2022 ուստարվա ամառային քննաշրջանի վերաբերյալ

ամփոփ տեղեկատվությունը: Նա նշեց, որ բոլոր կուրսերում 2021-2022 ուստարվա ամառային քննաշրջանը կազմակերպվել և անցկացվել է համաձայն ուսումնական օրացույցի և հաստատված ժամանակացույցին՝ 29.04.2022թ.– 28.06.2022թ.:

Քոլեջի բոլոր կուրսերում տնօրենի տեղակալի, ուսումնական մասի վարիչի, ամբիոնների վարիչների մասնակցությամբ կազմակերպվել և անցկացվել են քննաշրջանի հետ կապված խորհրդակցություններ:

Ժամանակին ուսանողներին են տրամադրվել բոլոր քննական դասընթացների հարցաշարերը, կիսամյակի ընթացքում և քննություններից առաջ դասախոսները անցկացրել են առարկայական խորհրդատվություններ:

Քննաշրջանի ավարտին, յուրաքանչյուր կուրսի հետ ամփոփվել են տվյալ կուրսի քննաշրջանի արդյունքները, բարձրաձայնվել առաջադիմության հետ կապված հարցեր, մասնավորապես ակադեմիական պարտքեր ունեցող ուսանողներին հատուկ հիշեցվել են ակադեմիական պարտքերի քանակը և դասընթացները:

Քննաշրջանի ժամանակացույցերը հասանելի են եղել բոլոր ուսանողներին:

Քննաշրջանի ողջ ընթացքը վերահսկվել է տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի, ՈԱ պատասխանատու և ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի կողմից:

Ամառային քննաշրջանում միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով միասին կազմակերպվել և անցկացվել են ընդհանուր թվով 206 ստուգարք և 22 քննություն:

Ամփոփելով ելույթը Լ.Հարությունյանը նշեց, որ ամբողջական տեղեկատվությունը ներկայացված է հաշվետվությունում (հաշվետվությունը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը 2021-2022 ուստարվա պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների վերաբերյալ:

Լ.Հարությունյանը տեղեկացրեց, որ ըստ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված կարգի ժամանակացույցին համապատասխան մասնագիտական ամբիոնների վարիչների և դասախոսների կողմից ամբիոններում քննարկվել են պետական ամփոփիչ ատեստավորման քննական հարցաշարերը, քննական տոմսերը և երաշխավորվել են հաստատման:

Հարությունյանը ներկայացրեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրենի համապատասխան հրամանները, որով հաստատվել են 2021-2022 ուստարվա պետական որակավորող հանձնաժողովի կազմեր.

1. 0916.01.5 «Դեղագործություն 16.05.2022թ. Հրաման №ԸԳ-35-Ա նախագահ՝ Կարեն Սարգսյան «Դենտալ-Ֆարմ» ՍՊԸ-ի տնօրեն:
2. 0911.01.5 «Ատամնատեխնիկական գործ» 16.05.2022թ. Հրաման №ԸԳ-36-Ա նախագահ՝ Արման Մանուկյան «Նյու-Հոփ» ատամնաբուժական կլինիկա ՍՊԸ-ի տնօրեն:

Շարունակելով ելույթը Լ.Հարությունյանը ներկայացրեց պետական որակավորող հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները ամփոփ տեսքով:

Եզրափակելով ելույթը, Լ.Հարությունյանը հավելեց, որ ամփոփիչ ատեստավորման վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը ներկայացված է հանձնաժողովների նախագահների հաշվետվություններում (հաշվետվությունը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. **Լսեցին՝** ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանի ելույթը Քոլեջում գործող ներքին նորմատիվ փաստաթղթերի ընթացքի վերաբերյալ:

ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանը ողջունելով Մանկավարժական խորհրդի նիստի մասնակիցներին, ներկայացրեց օրակարգային հարցի վերաբերյալ համառոտ և ամփոփ տեղեկատվություն, մասնավորապես՝

1. 2019-2020 ուստարվանից Քոլեջում մեկնարկած հիմնարար բարեփոխումների արդյունքում իրականացվել և այժմ էլ իրականացվում են համալիր միջոցառումներ:
2. Վերանայվել է Քոլեջի կառավարման համակարգը, մշակվել և ներդրվել է գծային նոր կառուցվածք՝ կառավարման հորիզոնական և ուղղահայաց մոդելով:
3. Վերանայվել և վերամշակվել է Քոլեջի 2019-2024թթ. նոր ՌԶԾ-ի, ծրագրի գործողությունների իրականացման պլան-ժամանակացույցը, ՌԶԾ-ի վերջնարդյունք-ների ԳԱՑ-ը:
4. Տնօրենի հրամանով ձևավորվել են համապատասխան աշխատանքային խմբեր և հանձնաժողովներ, որոնց կողմից՝ վերանայվել են 7 ներքին նորմատիվ փաստաթղթեր:
5. Մշակվել, հաստատվել և ներդրվել են 29 նոր ներքին նորմատիվ փաստաթղթեր (ընթացակարգեր, կարգեր, կանոնակարգեր, քաղաքականություններ, ուղեցույցեր):
6. Վերանայվել են Քոլեջում գործող 4 ՄԿԾ-ը, որի արդյունքում մշակվել են ամբողջովին նոր ձևաչափով ՄԿԾ-ի փաթեթները, որոնց մեջ ներառված են՝

ուսումնական պլանները, առարկայական/մոդուլային դասընթացների ծրագրերը, ՄԿԾ-ի վերջնարդյունքները, պրակտիկաների ծրագրերը և պրակտիկայի օրագրերը:

7. Մշակվել և ներդրվել է Քոլեջի հաստիքացուցակով նախատեսված աշխատակիցների պաշտոնի անձնագիրը, բոլոր հաստիքների համար:
8. Մշակվել և ներդրվել է կառավարման և խորհրդակցական մարմինների նիստերի արձանագրությունների նոր ձևաչափ:
9. Մշակվել և ներդրվել է կառավարման, խորհրդակցական մարմինների և ստորաբաժանումների պլանավորման և կատարողականների նոր ձևաչափ:
10. Մշակվել և ներդրվել է հետազոտական աշխատանքների կազմակերպման կարգը և այլն:

Ամփոփելով ելույթը, Ա.Գյոզալյանը խնդրեց այցելել Քոլեջի պաշտոնական կայք և աստիճանաբար ծանոթանալ բոլոր փաստաթղթերի հետ: Ցանկացած հարցի և առաջարկությունների վերաբերյալ պարզաբանումները հնարավոր է կազմակերպել ինչպես առցանց, այնպես էլ հանդիպումների միջոցով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաղորդումն ընդունել ի գիտություն:

4. Լսեցին՝ ՈԱ պատասխանատու Ա.Գ.Գյոզալյանի ելույթը Ինստիտուցիոնալ հավատարմագրման աշխատանքների վերաբերյալ:

Ողջունելով նիստի բոլոր մասնակիցներին Ա.Գ.Գյոզալյանը նշեց, որ Քոլեջը պաշտոնապես ապրիլի 19-ին դիմում-հայտ է ներկայացրել ՀՀ ՈԱԱԿ հիմնադրամ, որն էլ ապրիլի 22-ին բավարարվել է:

Հաշվի առնելով այս հանգամանքը, նա նշեց, որ Քոլեջի ամբողջ անձնակազմը մեծ պարտավորվածություն ունի Քոլեջի և հենց տիկին Նանյանի առջև: Հենց տիկին Նանյանի մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հեռատեսության շնորհիվ է, որ Ինստիտուցիոնալ ինքնավերլուծության աշխատանքները ամբողջովին ավարտված են: Այնուհանդերձ, կան որոշ աշխատանքներ, որոնք հենց մասնագիտական բնույթի են, ինչպես օրինակ՝

1. առարկայական/մոդուլային դասընթացների ծրագրերի ամբողջական պատրաստումը:
2. Առարկայական դասընթացների լեկցիաների էլեկտրոնային տարբերակների ապահովումը:
3. Ամբիոնի նիստերի արձանագրությունների ամբողջականությունը:
4. Ամբիոններում, ուսումնամեթոդական բաց դասերի, մասնագիտական բնույթի հետազոտական աշխատանքների ակտիվացումը: Օրինակ, դասախոսներից մի քանիսը՝ Նարինե Եգորյան (2), Հասմիկ Քոչարյան (3), Արմինե Վարպետյան (2),

Իրինա Վարդանյան, Աննա Վարդանյան, Արեգնազ Մելքոնյան, ընթացիկ ուստարվա ընթացքում իրականացրել են մի շարք տարբեր բնույթի հետազոտական աշխատանքներ:

Հավելելով, նա նշեց, որ այս պահի դրությամբ սպասվում է ՈԱԱԿ հիմնադրամի կողմից պայմանագրի նախագծի ներկայացումը, որը շատ հավանական է կնքվի մինչև օգոստոս ամիսը: Կնքելուց հետո 2 ամսվա ընթացքում պետք է ներկայացնենք ինքնավերլուծության փաթեթը: 4 ամսից նախատեսվում է փորձագիտական հանձաժողովի այցը Քոլեջ, այցի ընթացքում հանդիպումներ է լինելու ղեկավար, դասախոսական և ուսանողական կազմի հետ: Հանդիպում է լինելու նաև շրջանավարտների հետ:

Հանդիպումներից հետու 4 օրվա ընթացքում հանձնաժողովի կողմից ուսումնասիրվելու են այն բոլոր փաստաթղթերը, որոնք մենք ներկայացնելու ենք նախապես: Այցի ավարտից հետո, 3 ամսվա ընթացքում մեզ կուղարկեն վորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որից հետո արդեն հանդիպում պետք է լինի ՈԱԱԿ-ում և այնտեղ էլ կկայացվի հավատարմագրման որոշումը: Ես որպես ՈԱ երկարամյա տարիների փորձ ունեցող մասնագետ, կարող եմ վստահեցնել Ձեզ, որ պահանջվող փաստաթղթերը բոլորը պատրաստ են և ոչ մի խնդիր չեն առաջացնելու: Հիմնական պատասխանատվությունը ընկած է Քոլեջի անձնակազմի վրա, այսինքն, այն ինչով դուք զբաղված և զբաղվում էք պետք է կարողանաք առանց կաշկանդվելու ներկայացնել փորձագետներին:

Ամփոփելով ելույթը Ա.Գյոզալյանը առաջարկեց ներկայացնել հարցեր, եթե այդպիսին կան, հարցեր չհնչեցին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել ամբիոն վարչների մինչև նոր ուսումնական տարվա մեկնարկը, ամբիոններում ապահովեն բոլոր դասընթացների էլեկտրոնային ռեսուրսների առկայությունը:
3. Ավելացնել փոխադարձ դասալսումների քանակը և բարելավել դրանց որակը:
4. Հանձնարարել ամբիոնի վարիչներին նոր ուսումնական տարվա առաջին նիստում ներկայացնել դասալսումների վերաբերյալ բարելավման առաջարկություններ:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան